



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Պտղնիի միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն	3
Ընտանիք	5
Սոցիալ-հոգեբանորեն խաթարված ընտանիքներ	8
Երեխայի սոցիալականացումը	9
Ոչ լիակազմ ընտանիքներ՝ հետևանք ամուսնալուծությունների	10
Ոչ լիակազմ ընտանիքներ՝ հետևանք դժբախտ պատահարների	13
Լիակազմ, բայց կոնֆլիկտային ընտանիքներ	15
Երջանիկ ընտանիքներ	18
Որպես վերջաբան	20
Գրականության ցանկ	21

Ներածություն

*Բոլոր ընտանիքները, որտեղ երջանկություն է տիրում,
նման են բայց յուրաքանչյուր ընտանիք ունի իր դժբախտությունները:*

Լև Տոլստոյ

ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված է: «Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է»¹: Ընտանիքը ազգի դիմագիծն է՝ իր լեզվով, հոգեբանությամբ, ավանդույթներով, ծեսերով: Տվյալ հասարակությունում որքան ամուր են ընտանիքի հիմքերը, այնքան ամուր է այդ հասարակությունը: Ազգի գոյապահպանական հիմքը հայ ընտանիքն է: Յուրաքանչյուր ընտանիքում ծնողները պարտավոր են երեխաների համար ստեղծել բարենպաստ պայմաններ նորմալ ապրելու, զարգանալու, սովորելու, աշխատելու, հանգստանալու համար: Հայ ընտանիքներում տան գլխավորը հայրն է, իսկ կանայք ավելի պատասխանատու են երեխաների խնամքի, դաստիարակության, հանգստի կազմակերպման համար: Այսօր ընտանիքը բախվում է նյութական, կենցաղային, բնակարանային, հոգեբանական, հանգստի և ազատ ժամանակի կազմակերպման հետ կապված տարբեր խնդիրների, որոնք կապված են իրար հետ և ստանում են տարբեր դրսևորումներ: Այս ամենը երբեմն պատճառ է դառնում ամուսնալուծությունների թվի մեծացման: Երեխան չի կարող լիարժեք ապրել ու մեծանալ առանց ընտանիքի, ծնողների, նրանց սիրո ու հոգատարության: Երեխայի համար մոր սիրտն է ցավում, հոր՝ ձեռքերը:

Ծնողները եղել և մնում են երեխաների առաջին պաշտպաններն ու դաստիարակները: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների միջև առաջացնում լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթուրումներ և վարքի խանգարումներ:

¹ ՀՀ Սահմանադրություն: Հոդված 35: Ընդունվել է 06.12.2015

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

- Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում: Անհրաժեշտ է ոչ միայն սիրել երեխային և առաջնորդվել նրա խնամքի ամենօրյա հոգսերով, նրա դաստիարակությամբ, այլև անհրաժեշտ է, որ երեխան զգա, հասկանա, վստահ լինի, որ իրեն սիրում են: Միայն սիրո հիման վրա կարող ենք դաստիարակել բարոյական վարքագիծ: Բայց պետք է հիշել, որ ոչ լիակազմ ընտանիքում պարտադիր չէ, որ մի ծնողը լրացնի բացակայող ծնողի սերը. սերը երկուսի համար, սերը երկուսի փոխարեն միշտ չէ, որ պտուղ է տալիս: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Այս աշխատանքում կփորձեմ ներկայացնել թե ի՞նչ է ընտանիքը,
- ինչպիսի՞ ընտանիքներկան,
- իրականում ի՞նչն է գոռոցներ, արցունքներ, հայհոյանքներ, սպառնալիքներ, երբեմն կռիվներ առաջացնում, դրանից ինչպե՞ս են տուժում ընտանիքի անդամները, հատկապես՝ երեխաները,
- ինչպե՞ս կարելի է ընտանիքի ներսում դրանք հարթել՝ չվնասելով երեխային, չխեղելով նրա հոգեկան ներաշխարհը:

Ի վերջո՝ ընտանեկան կյանքի գլխավոր իմաստն ու նպատակը երեխաների դաստիարակությունն է. չէ՞ որ ժողովրդական առածն ասում է. «Ընտանիքը դաստիարակության ամենամեծ համալսարանն է»: Դաստիարակելով երեխաներին՝ ծնողները դաստիարակում են մեր երկրի ապագան, իսկ դա նշանակում է՝ նաև ամբողջ աշխարհի պատմություն:

Ընտանիք

*Ընտանիքը այն առաջին միջավայրն է, ուր
մարդը պիտի սովորի բարիք գործել:*

Վ. Մուխոմլինսկի

Ընտանիքը հասարակության մաս է կազմում, որի վրա խարսխվում է հասարակական փոխհարաբերությունների ողջ համակարգը: Դժվար է գերազնահատել ընտանիքի դերը մարդու կյանքում: Այն բարդ սոցիալ-մշակութային միջավայր է, որտեղ և որի ազդեցությամբ ձևավորվում ու կայանում է երեխայի «ես»-ը: Ընտանիքը այն կառույցն է, որը ենթադրում է ընտանիքի անդամների պաշտպանվածություն և նրանց պահանջմունքների բավարարում: Մարդը հասարակական կյանք մտնելու իր ողջ նախապատրաստական շրջանն անց է կացնում ընտանիքում: Ընտանիքում ծնողները, դեռևս վաղ մանկության հասակում, սովորեցնում են ինչը կարելի է, ինչը՝ չի կարելի, ինչը լավ է, ինչը՝ վատ, ինչն է մարդու վարքում ընդունելի ու ինչը՝ դատապարտելի: Առողջ ընտանիքում ծնողները կապված են ամենօրյա բնական շփումներով, որի արդյունքում ավելի վառ են դառնում հայրական ու մայրական զգացմունքները, ազգակցական կապերն ավելի են ամրապնդվում:

Ծնողներն ու երեխաներն ունեն փոխադարձ հաղորդակցման պահանջ, ինչը կախված տարիքային առանձնահատկություններից, տարբեր կերպ է դրսևորվում: Դեռահասները ձգտում են ինքնահաստատման, պատանիները՝ ինքնադրսևորման: Եթե նրանք ծնողների հետ հասնում են փոխըմբռնման, ապա ձգտում են ակտիվ մասնակցել ընտանիքի կյանքին, թեթևացնել ծնողների հոգսերը: Ծնողների սերն ու քնքշանքը երեխայի զարգացման համար կարևոր նախապայմաններ են: Ծնողները միշտ պետք է հիշեն, որ երեխան սիրել սովորում է ծնողներից:

Սակայն ընտանիք կառույցը ժամանակի ընթացքում կարող է ու փոխվում է: Ընտանեկան փոփոխությունները էապես փոխում են երեխայի վարքը: Ընտանեկան կյանքն ուղեկցվում է բազմաթիվ սթրեսներով, որոնք հաղթահարելու համար ընտանիքների կարողությունները տարբեր են: Գրեթե յուրաքանչյուր ընտանիքում տեղի են ունենում հակամարտություններ, վեճեր, որոնց հաջորդում է տխրությունն ու վիշտը, արցունքներն ու լացը, դեպրեսիան ու նյարդային խանգարումները.....:

Թվում է, թե պատճառները տարբեր են, և որ անհնար է հասկանալ դրանք: Բայց արդյո՞ք դա այդպես է: Երբ խոսում ենք ընտանիքներում առկա կոնֆլիկտների մասին, թվում է, , որ դրանք միմյանցից տարբերվում են, բայց երբ ավելի խորն են ուսումնասիրում, հասկանում են, որ կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, որ դրանք միմյանցից տարբերվում են, բայց երբ ավելի խորն են ուսումնասիրում, հասկանում են,

որ կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը, իրար չհասկանալն ու չզիջելը, չվստահելը, իրարից շարունակաբար բողոքելը, ամուսնալուծությունները, ծնողներից մեկի ֆիզիկական բացակայությունը, ինչպես նաև՝ ժամանակի ընթացքում կուտակված կամ ինքնաբերաբար առաջացած բացասական հույզերն ու զգացմունքները: Ամուսնալուծված կամ ընտանիքի անդամի կորուստը առաջացնում են սոցիալ-ֆինանսական վիճակի ճգնաժամ, հոր կամ նկատելի բացակայություն, հետևաբար երեխայի վրա ազդեցության թուլացում, միջանձնային տարաձայնություններ, որոնցից կարող են ծագել նորերը:

Բայց միշտ պետք է հիշել, որ ցանկացած կոնֆլիկտ կարելի է լուծել խաղաղ ճանապարհով՝ առանց վիրավորական խոսքերի և բարձր ձայների. ընդամենը պետք է լսել իրար ու հասկանալ: Ամենավատն այն է, որ այդ ամենը հաճախ տեղի է ունենում ընտանիքում ամենաթույլ օղակի՝ երեխաների ներկայությամբ, ինչն էլ ազդում է նրանց հոգեբանության վրա: Երեխան, որ մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է «ճանր» բնավորություն, չի կարողանում շփվել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ցածր ինքնագնահատական: Վեճերն ու կռիվները հանգեցնում են նրան, որ ունենում ենք ոչ լիարժեք ընտանիքներ: Ոչ լիարժեք ընտանիքը չի կարող ապահովել երեխայի համար սոցիալականացման համար անհրաժեշտ պայմաններ, որի տակ հասկացվում է սոցիալական միջավայր մտնելու ողջ գործընթացը, հարմարեցումը, սոցիալական դերերի և գործառույթների յուրացումը: Ոչ լիարժեք ընտանիքի երեխան ավելի հաճախ հանդիսանում է բարեկեցիկ ընտանիքների երեխաների կողմից բարոյահոգեբանական ճնշման օբյեկտ, ինչը հանգեցնում է անապահովության, իսկ հաճախ՝ զայրույթի, ագրեսիվության զգացողության ձևավորմանը: Ոչ լիարժեք ընտանիքում ոչ միայն խախտված է հոգեբանական մթնոլորտը, այլ նաև երեխան մեկուսանում և կտրվում է աշխարհից: Ծնողները ծանր ճակատագիր են պատրաստում ոչ միայն իրենց, այլ նաև երեխաների համար: Երեխաներն իրենց ողջ խեղված կյանքով վճարում են առողջ բարոյահոգեբանական մթնոլորտով ամուր ընտանիք ստեղծելու ծնողների անկարողության համար: Ե՛վ՝ հայրը, և՛ մայրը յուրօրինակ տեղ են զբաղեցնում ընտանիքում: Յուրաքանչյուր ընտանիքի զգացմունքային կողմը ապահովում է մայրը, իսկ հայրը դեկավարում ու կառավարում է ընտանիքը: Չավակները հայրերին տեսնում են որպես տան հենարան ու հեղինակության խորհրդանիշ:



ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆՈՐԵՆ ԽԱԹԱՐՎԱԾ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ՈՉ ԼԻԱԿԱԶՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ՝
ՀԵՏԱՆՔ ԴԺԲԱԽՏ
ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՆ
ԱՂԵՏՆԵՐԻ, ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ

ՈՉ ԼԻԱԿԱԶՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ՝
ՀԵՏԱՆՔ
ԱՍՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԼԻԱԿԱԶՄ, ԲԱՅՑ ԿՈՆՏԼԻԿՏԱՅԻՆ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐ



ԴՊՐՈՑ

ԸՆՏԱՆԻՔ

ՇՐՋԱՊԱՏ

Ոչ լիակազմ ընտանիքներ՝ հետևանք ամուսնալուծությունների

Ավանդական ընտանիքներում ամուսնալուծության երևույթը համարվում է անընդունելի և դատապարտելի: Դրամատիկ իրավիճակ է նկատվում ծնողների ամուսնալուծության պատճառով քայքայված ընտանիքում: Ամուսնալուծությունների պատճառները տարբեր են՝ սոցիալ-տնտեսական պայմանները (ավելի շատ հայց է ներկայացնում կինը), բնավորությունների անհամապատասխանելիությունը (սա միայն արտաքին շղարշ է, սրա տակ թաքնված են հասարակական կարծիքը, ընկերական շրջապատը. այս դեպքում հայց է ներկայացնում տղամարդը), անզավակությունը, արտագնա աշխատանքը, թմրամոլությունը (ցավոք, մեծ տոկոս է կազմում), դավաճանությունը (մեծ մասամբ տղամարդու կողմից է ներկայացվում), երկու կողմերի հարազատների անտեղի միջամտությունը (սա շատ հաճախ բերում է կոնֆլիկտների, որոնք հասունանալով՝ դառնում են ամուսնալուծության պատճառ)...

Ամուսնալուծության ողջ պրոցեսի ընթացքում երեխաները ունենում են կորստի ու վշտի տարբեր զգացմունքներ ու ապրումներ: Երեխայի մոտ առաջ է գալիս բարկության, անարդարության, խաբվածության զգացում: Այս հոգեվիճակին հաջորդում է ճնշվածությունը, երբ երեխան ապրում է տխրության մեծ զգացում: Շատերը ծնողների ամուսնալուծությունը դիտարկում են որպես երեխայի և նրա կյանքի վրա գլխավոր բացասական ազդեցություն, անվստահության, ցավալի փորձությունների աղբյուր: Շատ դեպքերում հոգեկան վերքերը, որոնք երեխաները ստանում են ծնողների ամուսնալուծության արդյունքում, ինչ-որ ժամանակ բուժվում են, բայց լինում է և հակառակը՝ ապրած ցնցումը երկարատև ազդեցություն է ունենում և խանգարում երեխայի անձի հետագա լիարժեք հուզական և սոցիալական զարգացմանը: Դեռահասների համար ընտանեկան դրաման առավել կործանարար գործընթաց է: Դեռահաս աղջիկները, ովքեր զրկվել են հորից, ընտանիքից հեռանալու հետ կապված, բացասական վերաբերմունք են ունենում նրա նկատմամբ: Առանց հայր մեծացող երեխայի կյանքի և դաստիարակության պայմանները զգալիորեն տարբերվում են լիարժեք ընտանիքում մեծացող երեխայի կյանքից: Ամուսնալուծությունից հետո մայրը փորձում է փոխհատուցել այն, ինչն իր կարծիքով երեխաները չեն ստանում հոր բացակայության պատճառով: Նույնիսկ եթե մայրը փորձում է ինչ-որ կերպ լրացնել հոր բացակայությունը և անում է հնարավոր ամեն ինչ, որպեսզի լրացնի երկու ծնողների բացը, նա չի կարող լինել միաժամանակ և՛ մայր, և՛ հայր: Երեխաներն ավելի հաճախ են վիճում մոր հետ կամ մեծանում են պասիվ, անբան, չափից դուրս կապվում են մոր հետ, միշտ կախված են նրա կարծիքից, խոսքից: Չոր և նրա մասին հետաքրքրող տեղեկատվության բացակայությունը երեխայի վրա ազդում է ամենաանբարենպաստ ձևով: Գիտնականները նշում են, որ միայնակ դաստիարակվող երեխան մեծանում է ավելի արագ, քան լիարժեք ընտանիքում մեծացող երեխան: Ծնողների ամուսնալուծությունը դժվար է ընկալվում ոչ միայն երեխաների, այլև իրենց ծնողների համար: Հաճախ մեծահասակները չեն կարողանում վերահսկել իրենց և իրենց դրական ու բացասական վերաբերմունքը փոխանցում են երեխաներին՝ ձևավորելով երբեմն ոչ ճիշտ

կարծիք, վերաբերմունք ծնողների նկատմամբ: Մեծահասակներն իրենց բացասական հույզերը լցնում են երեխաների «մեջ»՝ դրանով ատելություն սերմանելով դեպի ծնողը: Ծնողներն ավելի լուրջ պիտի մոտենան իրենց հարաբերությունների խզմանը և հաշվի առնեն երեխայի լինելու հանգամանքը: Հետևաբար, մեծահասակները պետք է հաշվի առնեն և հետևեն այն բոլոր հանգամանքներին, որոնք նման իրավիճակում ազդում են երեխայի հոգեկան զարգացման վրա: Ամուսնալուծությունը ստեղծում է տրավմատիկ իրավիճակներ, որոնք կարող են առաջացնել նյարդահոգեբանական խանգարումներ ինչպես ծնողների, այնպես էլ երեխաների մոտ: Ամուսնալուծությունը սթրեսային իրավիճակ է, որը սպառնում է ն՝ ծնողների, ն՝ երեխաների, ն՝ նրանց հարազատների հոգեկան հավասարակշռությանը: Հիվանդագին են արձագանքում ամուսնալուծությանը հատկապես՝ տղաները: Ծնողների «հակամարտությունը» բերում է նրան, որ երեխաների մոտ նվազում է առաջադիմությունը, տուժում է կարգապահությունը, ձգտում են հատուկ ուշադրության, երբեմն-երբեմն փախչում են տանից, խնդիրներ են ունենում ընկերների հետ, դժվարությամբ են շփվում հակառակ սեռի ներկայացուցիչների հետ, դառնում են ագրեսիվ, դյուրագրգիռ, հաճախ փակվում են իրեց մեջ, դառնում լուռ, չշփվող, ունենում են մեղքի զգացում՝ ընտանիքի փլուզման համար, հետաքրքրության պակաս և այլն....

Ծնողների ամուսնալուծությամբ երեխային հասցված հոգեկան վնասվածքը կարող է հատուկ դրսևորվել պատանեկության տարիներին: Երեխային միայնակ մեծացնող մայրերը, իհարկե հերոսներ են, սակայն հոր դերն անփոխարինելի է, նրա բացակայությունը ոչ ոք լիարժեք չի կարող լրացնել: Առանց հոր մեծացած դեռահասների մոտ զգացվում է մի տեսակ դաժանություն, ինչպես նաև ինքնագնահատականի իջեցում: Կան տարբեր տեսակետներ այն մասին, որ ընտանիքում հոր բացակայությունը երեխայի մտավոր զարգացման շեղումների կարևոր նախադրյալ է: Հնարավոր է դառնում մոր հանդեպ ավելորդ կապվածության ձևավորումը, քանի որ բացակայում է հայրը, ով կարող էր երեխային պոկել մորից՝ բերելով նրան ավելի լայն աշխարհ: Բարձր ինքնագնահատական ունեցող դեռահաս տղաների հայրերը հոգատար են, վայելում են նրանց վստահությունը, իրենց տղաների համար հեղինակություն են:

Ընտանիքի քայքայման ժամանակ առավել խոցելի է միակ երեխան: Նրանք, ովքեր ունեն եղբայրներ ու քույրեր, շատ ավելի հեշտ են ամուսնալուծվում:

Զգացմունքները կարևոր դեր են խաղում անձի կայացման գործընթացում: Դրանք ազդում են երեխայի աշխարհընկալման վրա, օգնում կամ խանգարում են ինքնագարգացմանը: Լավ տրամադրությունը ակտիվացնում է մարդու ճանաչողական և կամային գործունեությունը: Զգացմունքային վիճակը կարող է կախված լինել կատարված գործունեությունից, արարքից, ինքնագզացողությունից և այլն: Հուզական վիճակներում բացահայտվում են ինչպես մարդու համար բնորոշ վարքագծի առանձնահատկությունները, այնպես էլ պատահական, նրան բնորոշ հոգեկան դրսևորումները: Հուզական վիճակներում արտահայտվում են անձի անհատական, միայն իրեն բնորոշ առանձնահատկությունները: Զգացմունքները չունեն իրենց սեփական պատմությունը, փոխում են անձի արարքները, նրա վերաբերմունքը աշխարհի, մարդկանց նկատմամբ:

Ընտանիքում հուզական հարաբերությունների խախտումը բացասական ազդեցություն է ունենում երեխայի անձի ձևավորման վրա:



Ոչ լիակազմ ընտանիքներ՝ հետևանք դժբախտ պատահարների, բնական աղետների, պատերազմների

Սրանք այն ընտանիքներն են, որտեղ ֆիզիկապես բացակայում է ընտանիքի որևէ անդամը՝ հայր կամ մայր: Դեռահասության տարիքում շատ դժվար են տանում ծնողներից մեկի կորուստը, քանի որ այս տարիքում շատ ներազդվող են: Դրա համար կարևոր է, թե որ տարիքում են կորցնում ծնողներին, կապվածությունը նրանց հետ: Երբ բացակայում է այն ծնողը, որի հետ ավելի շատ է կապված երեխան, դա կրկնակի է ազդում երեխայի վրա: Այսպիսի ընտանիքների երեխաները ունենում են որոշակի զգացողություններ՝

- ծնողական գրկանքի զգացողությունը, որը նրան կուղեկցի մինչև կյանքի վերջը,
- ոչ լիարժեքության բարդույթը: Ինչպիսի հաջողությունների էլ հասնեն, նրանց մոտ կա այն զգացողությունը, որ եթե հայրիկը կամ մայրիկը լինեք, ապա ավելին կարող էր լինեք,
- թերահավատ, անվստահ վերաբերմունք կյանքի, ճակատագրի, մարդկանց նկատմամբ մինչև ինքնահաստատվելը. ինքնահաստատումից հետո դա կարող է վերանալ:

Լինում են իրավիճակներ, երբ երեխան ստիպված է լինում բախվել ծանր, դժվար հաղթահարվող իրավիճակների: Դա կարող է լինել մտերիմի մահը, կորուստը, աղետը և այլն: Եթե երեխայի կողքին առկա են աջակցող մարդիկ, ապա նա կարողանում է որոշակի ժամանակ անց հաղթահարել իրավիճակի հետևանքները: Երեխան երբեմն չի կարողանում բավարար չափով հասկանալ և իմաստավորել տեղի ունեցածը, այն ասես չի տեղավորվում նրա ուղեղում և համարում է, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում, վատ երազ է: Նրա համար 96 իշտն0 ու 9 սիսալը 0 դադարում են լինել հասկանալի: Արդյունքում երեխան կորցնում է վստահությունը այլ մարդկանց, ապագայի և անգամ ինքն իր նկատմամբ: Ստերիմի կորստից հետո փոխվում է երեխայի ողջ միջավայրը, կորուստը խարխլում է երեխայի դրական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ և հավատը դեպի լավը: Ծնողի մահը փոխում է երեխայի ինքնաընկալումը, սեփական անձի մասին պատկերացումները, ընտանեկան սպասելիքները: Որքան ավելի հուզականորեն մոտ էին միմյանց երեխան և կյանքից հեռացած ծնողը, այնքան ավելի մեծ է երեխայի վիշտը: Որքան միջավայրն ավելի անկեղծ է, բաց է հույզերն ու ապրումները արտահայտելու հարցում, այնքան մեծ է երեխայի կորստի հաղթահարման հավանականությունը: Երեխան կարող է չհասկանալ կորստի հետևանքները, սակայն զգալ անապահովություն, տազնապ, անհանգստություն: Կորստի դեպքում երեխաները դրսևորում են իրենց անհանգստությունը լացի, բացակայող անձի փնտրտուքի միջոցով: Երեխան կարող է վստահ լինել, որ եթե իրեն լավ պահի, անի այն ամենը, ինչ իրենից սպասվում է, ապա անպայման մահացած ծնողը կվերադառնա և կմնա իր կողքին: Այդ պատճառով նա սկսում է անհիմն խոստումներ տալ, միայն թե վերադարձնի սիրելի հայրիկին կամ մայրիկին: Որ տարիքում էլ լինի երեխան, նա որևէ կերպ հակազդում է

կորստին և յուրովի սգում ծնողի կամ հարազատի մահը: Իսկ որքան տարիքով մեծ է, այքան գիտակցում է ,որ շարունակելու է ապրել առանց իր սիրելի ծնողի, և ծնողը «չի լինելու» իր կյանքում, չի մասնակցելու իր ապագայի կառուցմանը: Բայց այսպիսի ընտանիքներում բարոյահոգեբանական մթնոլորտը բարձր է մնում,բարձր է մնում նաև մի շատ կարևոր գործոն՝ հեռացածի հիշատակը լույսի նման ուղեկցում է նրան, մղիչ ուժ է հանդիսանում, և բարոյականությունը անաղարտ է մնում: Երեխան սովորում է ապրել առանց ծնողի՝ կրելով տխրությունը և կարոտը:

Ցանկացած երեխայի համար, կարևոր է մտերիմ մեծահասակի առկայությունը, ով կհասկանա և կկիսի իր հետ իր ապրումները, կկարողանա նպաստել դրանց լիցքաթափմանը և հստակ պատասխաններ կտա իրեն հուզող հարցերին: Կորստից հետո երեխան միշտաջակցության, կիսվելու, խոսելու, իրեն հասկացող մեծահասակի կողքին լինելու կարիք ունի: Շատ կարևոր է երեխայի հետ լինել անկեղծ: Անհրաժեշտ է տեղեկատվություն տալ տարիքին համապատասխան ձևով ու ծավալով, լինել անկեղծ ու ասել միայն ճշմարտությունը: Պետք է երեխային վստահեցնել, որ նա կատարվածում ոչ մի մեղավորություն չունի, պետք է նրան պարբերաբար օգնել, ներշնչել ապահովություն, վստահեցնել, որ կողքին շատ մարդիկ կան, ովքեր օգնության ձեռք կմեկնեն, պետք է օգնել վերադառնալ առօրյային, սովորական գործունեությանը, լինել երեխայի նկատմամբ չափազանց համբերատար, անգամ այն դեպքում, երբ նա դրսևորում է մերժողական, ագրեսիվ վարք: Այս դեպքերում է , որ տազնապներն ու դեպրեսիվ տրամադրությունները կարող են այնքան մեծանալ, որ երեխայի մոտ կարող են ի հայտ գալ ինքնասպանության մտքեր կամ գործողություններ: Սրանից խուսափելու համար՝ անհրաժեշտ է անընդհատ զրուցել երեխայի հետ և հասկացնել, որ քեզ սիրող մարդիկ կան, ում դու պետք ես և պիտի գունավորես ու լցնես նրանց կյանքը, որ կյանքից հեռացած ծնողդ չտխրի , որ սխալ է դաստիարակել քեզ, պիտի ուժեղ լինես, որ ուժ տաս ապրողներին:



Լիակազմ ,բայց կոնֆլիկտային ընտանիքներ

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ գույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են, և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է: Իսկ եթե չկա այս ամենը և գերիշխողը կոնֆլիկտն է, ուրեմն ավելորդ է խոսել խաղաղության, ներդաշնակության մասին: Այսպիսի ընտանիքները սոցիալապես լիակազմ են, բայց հոգեպես՝ ոչ: Այստեղ առկա են բազմապիսի կոնֆլիկտներ: Ընտանիքում մշտական բնույթ կրող վեճերի պատճառները կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, չարդարացված սպասումները, սեռական հարաբերություններում առկա խնդիրները, սոցիալ-տնտեսական պայմանները, գույգերից մեկի ծանր բնավորությունը, դավաճանությունը, կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները: Երբ ծնողները տվյալ հարցերը չեն կարողանում ժամանակին լուծել, իրավիճակը վեր է ածվում կոնֆլիկտայինի, կարող են կիրառվել հոգեբանական և ֆիզիկական բռնություն: Կոնֆլիկտների արդյունքում խաթարվում է ընտանիքի անդորրը, նկատվում է ագրեսիվություն, ամուսինները թշնամաբար են տրամադրվում միմյանց նկատմամբ, վիրավորում են, անգամ ձեռք բարձրացնում իրար վրա: Այս ամենը հաճախ տեղի է ունենում երեխայի կամ երեխաների աչքի առջև, ինչն էլ ազդում է նրանց հոգեկան առողջության վրա. շարունակ ապրելով այս միջավայրում, երեխան կարող է գերապրումներ ունենալ, ձևավորել անվստահություն աշխարհի հանդեպ, գոհի կամ ագրեսորի հոգեբանություն:

Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում: Նա կարող է մտածել, որ ինքն է մեղավոր կատարվածում: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա այն դեպքում, երբ երեխան ականատես է լինում բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում են մեկուսացված, նաև կարող են ունենալ նյարդային և այլ հիվանդություններ:

Ցանկացած կոնֆլիկտ երեխան կարող է ընկալել որպես սիրո բացակայություն: Հետևաբար, ծնողների վեճերը սիրո բացակայության, հուսահատության, անպաշտպանության, տազնապի զգացման հիմք կարող են հանդիսանալ: Երբեմն հայրն ու մայրը ուրիշների մոտ ձևացնում են, թե երջանիկ են, հաշտ ու խաղաղ, իսկ տանը լրիվ հակառակ պատկերն է: Ծնողների կողմից հարգանքի կամ սիրո ծայրահեղ տարբերվող ցուցադրությունների դեպքում երեխան ծնողներին վերագրում է անարդարության, ստախոսության հատկանիշներ և կասկածում ծնողների՝ իր հանդեպ ունեցած սիրուն, ազնվությանը, նվիրվածությանը, առաջանում է հիասթափություն, և աշխարհի հանդեպ ձևավորվում է կասկածամիտ վերաբերմունք: Սա կարող է հանգեցնել շեղվող վարքագծի: Կոնֆլիկտային իրադրության մեջ երեխաներն իրավունք ունեն արտահայտել իրենց կարծիքը և որոշակի դեր խաղալ խնդրի լուծման գործում: Պատահում է նաև, որ երեխաների կարծիքը անտեսվում է, ընտանիքի անդամները գտնվում են սուր կոնֆլիկտային իրադրության մեջ, և երեխային ,սթրեսից խուսափելու համար, մնում է պարզապես հեռու կանգնել

իրադրությունից:Այս դեպքում էլ առաջանում է անտարբերություն:

Պետք է փաստել, որ որոշ երեխաների համար կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ, և դա պատճառ է դառնում, որ երեխան ավելի հասուն տարիքում նույն անտարբերությունն է դրսևորում շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում է սառնասիրտ: Այսպիսի ընտանիքների երեխաների ծնողները ,տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր,կատարում անընդունելի արարքներ:Երբ երեխան սիրո և հոգատարության մթնոլորտի փոխարեն մեծանում է թշնամանքի և ագրեսիայի մեջ, բնականաբար, նրա առաջնային պատասխանը ևս կարող է դառնալ ագրեսիան:Երբ երեխան տեսնում է որոշակի վերաբերմունք, նմանապես էլ արձագանքում է տարբեր իրավիճակներում:

Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ երեխան առաջին քայլերն է անում դեպի մեծ աշխարհ, ճանաչում է առկա հարաբերությունները, կանոնները, պահանջները:Ընտանիքում երեխան տեսնում է, թե ինչպես են հարաբերվում, վերաբերվում միմյանց,սովորում է սիրել,հոգ տանել, հարգել:Եթե ընտանիքում խախտված կամ խզված են հուզական կապերը, երեխան չի կարողանում համապատասխան վարք ձևավորել:Նա նաև ունենում է հուզականության, ջերմության մեծ կարիք, որը մշտապես անպատասխան մնալով՝ հանգեցնում է չարանալուն:Այն երեխաները, որոնք ընտանիքում չեն ստանում բավարար ջերմություն, սեր, հոգատարություն, նվաստացման զգացումներ են ունենում, ենթարկվում են բռնության, սկսում են իրենք պաշտպանել իրենց իրավունքները սեփական ձևով, որոնք հաճախ բերում են տնից փախուստի:Այս ամենն արտահայտվում է երեխայի վարքագծում, որոնք վտանգավոր են դառնում հասարակության համար:Ծնողի վարքն օրինակ է երեխայի համար: Այդ է պատճառը, որ երեխան որդեգրում է ծնողի մոտեցումները, մտքերը, շարժումներ՝ նմանվելով նրան:

Մի խումբ հայրեր ընտանիքում իրենց ետըցույց տալու համար՝ անընդհատ բարձր ձայնով են խոսում, ընտանիքի անդամների հետ կոպիտ են, խիստ, ցուցաբերում են հրամայական մոտեցում:Այսպիսի ընտանիքում մեծացող երեխան չի կարող լինել գթառատ, մարդասեր, բարի, անգամ ընտանիքի անդամների հանդեպ:Երեխան սկսում է համեմատել «իդեալական» ծնողի իր պատկերացումներն «իրական» ծնողների հետ և տեսնում, որ հսկայական տարբերություն կա «իդեալական» և «իրական» ծնողների միջև:Նա սկսում է իրեն մեծ համարել, խառնվել ծնողների միջև տեղի ունեցող կոնֆլիկտներին, ձայնը բարձրացնել, պաշտպանել հորը կամ մորը, պահանջել ,որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի՝ կարևորություն տալով իր անձին ու կարծիքին: Բայց շատ հաճախ , ծնողները շարունակում են նրան վերաբերվել փոքր երեխայի նման, ինչն առաջացնում է լուրջ խնդիրներ:

Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի, հեռու պահել ընտանեկան խնդիրներից ու կոնֆլիկտներից՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով:Արդյունքում, երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, ինչպես հայրը՝ մոր, փորձում է ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել՝ աչքի առջև միշտ ունենալով հայրիկի «վառ» օրինակը մայրիկի հանդեպ.չէ որ հայրը սիրում է կրկնել՝ տան տղամարդը պետք է բռունցքը միշտ կնոջ գլխին պահի,

որ տունը տուն լինի: Բայց լինում են դեպքեր, որ նման ընտանիքի երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը: Առաջին հայացքից թվում է, թե ծնողների միջև կոնֆլիկտները ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը, և նա հասկանում է, որ իր ընտանիքը ամեննին էլ այն չէ, ինչ ցույց է տալիս այլոց, որ այնտեղ չկա սեր, հարգանք, փոխզիջում: Ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որ գտնվում է այդ կոնֆլիկտների կիզակետում, ունենում է ատելության զգացում ծնողների նկատմամբ: Կոնֆլիկտային ընտանիքների երեխաները խնդիրներ են ունենում միջանձնային հարաբերություններում, դժվարանում են լուծումներ գտնել և շատ անգամ էլ դրանք փնտրում են վատ միջավայրում: Այս ամենը բացասաբար են անդրադառնում պատանեկության և հասունության անցման տարիքում նրանց հարաբերությունների վրա, քանզի ընտանեկան բախումներն իրենց պատճառահետևանքային կապերով նպաստում են այն բանին, որ երեխան ավելի բացասաբար ընկալի սոցիալական միջավայրը, ունենա վատ տպավորություններ և պատկերացումներ ընտանեկան հարաբերությունների և արժեքների մաս:

Ծնողները պետք է հասկանան ու գիտակցեն, որ պարտավոր են դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով պետք է նվազագույնի հասցնեն կոնֆլիկտների թիվը, իսկ եթե դրանք առկա են, ապա արագ ու անցնցում լուծում տան, ընտանիքում ստեղծեն խաղաղ, հանգիստ մթնոլորտ, խուսափեն երեխայի ներկայությամբ հարցեր լուծելուց, երեխայի մոտ ծնողներից որևէ մեկին վատաբանելուց, բարիդրացիական հարաբերություններ հաստատեն ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:



Երջանիկ ընտանիքներ

Ընտանիք ստեղծելու համար բավական է սիրել, իսկ պահպանելու համար պետք է դիմանալ և ներել:

Մայր Թերեզա

Ընտանիքը սիրո, հարգանքի, հանդուրժողականության աղբյուր է, որի հիման վրա էլ ձևավորվում է հասարակությունը: Ընտանիքի բարօրությունը հանդիսանում է պետության զարգացման և առաջընթացի գրավականը: Երբեմն շատ դժվար է լինում սեփական ընտանիքի խաղաղ և երջանիկ կյանքն ապահովել, բայց դրա համար պիտի անել անգամ անհնարինը: Ընտանիքում բոլորի համար էլ ամենակարևորը հասկացված լինելն է, առավել ևս այն մարդու կամ մարդկանց, ում հետ ապրում ես նույն հարկի տակ: Եթե դիմացինը քեզ հասկանում է, կիսում քո կարծիքը, ձեռք ես բերում ինքնավստահություն: Դա օգնում է հասնել հոգեկան հանգստության, որը շատ կարևոր է ընտանիքներում:

Ընտանիքում կարևոր է այն, թե ինչ միջավայրում և ընտանեկան մթնոլորտում է մեծանում երեխան: Ապացուցված է, որ երեխան որքան շատ մարդկանց հետ է շփվում, որքան շատ մարդիկ են նրան անկեղծորեն սիրում, այնքան նրա համար ընտանիքում ապրելը հեշտ է լինում և իրեն էլ ավելի երջանիկ է զգում: Միայն երջանիկ մարդը կարող է երջանիկ ընտանիք կազմել և իր երջանկությունը փոխանցել ընտանիքի մյուս անդամներին: Ընտանիքում համերաշխության մթնոլորտը կարևոր է զավակների մեջ սիրելու կարողություն սերմանելու համար: Ծնողների սերը երեխաների հանդեպ շատ կարևոր է, բայց այն չպիտի լինի գերշատ, որովհետև, այս դեպքում այն կարող է բացասական ազդեցություն թողնել. պետք է երեխային ինքնուրույնություն ձեռք բերելու հնարավորություն տալ:

Ընտանեկան կյանքում որևէ բան ձեռնարկելիս՝ անհրաժեշտ է կայացնել համատեղ որոշումներ, հաշվի առնել յուրաքանչյուրի կարծիքը, հարգել այն: Զույգերն իրենց հարաբերություններում փոխադարձ սիրուց բացի պետք է ունենան նաև փոխադարձ հարգանք: Սակայն ընտանիքի կայացման ամենամեծ գործոնը սերն է: Երբ այն դադարում է կամ պակասում, ընտանեկան կյանքում առաջանում է մեծ ճեղքվածք, խաթարվում է ընտանեկան կյանքի անդորրը: Այդ իսկ պատճառով պիտի անել ամեն ինչ, որ մեր հասարակության մեջ երջանիկ ընտանիքները, ժպտացող երեխաները, սիրուց փայլող աչքերը շատ լինեն:

Պետք է հիշել ու երբեք չմոռանալ, որ ընտանիքը անգնահատելի նվեր է և այն պիտի պահպանել, պաշտպանել, ոչ թե ոչնչացնել ու ոտնատակ տալ:

Որպես վերջաբան

Ընտանիքն ամենամեծ պարզևն է, որ Աստված տվել է մեզ: Այն կարևոր հոգևորարժեք է, որը հիմնված է սիրո և հանդուրժողականության հիման վրա, ինչն էլ անհրաժեշտ է պահպանել, քանի որ ընտանիքի հիմքը սերն ու փոխադարձ հարգանքն է:

Յուրաքանչյուրս ուժեղ ենք մեր ընտանիքով, որովհետև այն հանդիսանում է մեզանից յուրաքանչյուրի ապավենը, հենասյունը, որը պարտավոր ենք ամուր պահել ու սիրել: Ինչ կա առավել երանավետ, քան ընտանեկան երջանկությունը, ընտանեկան տաք ու ջերմ անկյունը, որտեղ երեխան մեծանում է շրջապատված սիրով: Ընտանիքում իսկական սերն այն է, երբ ոչ թե սպասում ես, որ դիմացինդ քեզ երջանկացնի, այլ ինքդ ես ձգտում երջանկացնել քո կեսին, առանց ում հաստատ կիսատ կլինեիր: Պետք է սովորել ոչ թե շարունակ բողոքել քո կեսի թերություններից, այլ ընդունել նրան այնպիսին, ինչպիսին որ կա. թերություններից առաջ փորձիր նկատել առաքինությունները:

Ընտանիքում շատ կարևոր է նաև ներելն ու ներողություն խնդրելը: Ամենադժվար բանը ներողություն խնդրելն է, բայց եթե սխալ ես, ապա ընդունիր այն և կարողացիր արտաբերել մոզական «կներես» բառը:

Ընտանիքում ծագած յուրաքանչյուր խնդրի և անախորժության հաղթահարումը սերն է, որը մենք տաճում ենք մեր ընտանիքի անդամների հանդեպ, քանզի այնտեղ, որտեղ կա սեր, յուրաքանչյուր փորձություն հեշտ հաղթահարելի է.....

ՄԻՐԵՑՆՔ ՄԻՄՅԱՆՑ



Գրականության ցանկ

1. Արզումանյան Ա. Ս. Անբարենպաստ ընտանիքի երեխայի ես-ի դրսևորումների հոգեբանականյուրատիպությունը սոցիալականացման վաղ շրջանում // ք. Երևան 2002թ.
2. Խանամիրյան Ի. Ռ. ,Գևորգյան Դ.Է. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար» ,ԵՊՀ // ք.Երևան 2017թ.
3. Հարությունյան Ն. Ընտանիքի դերային համակարգը սոցիալական հոգեբանության համատեքստում // ք.Երևան 2008թ.
4. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն,«Ուրարտու համալսարան» //ք.Երևան2010թ.

Գրականության ցանկ

5. Արզումանյան Ա. Ս. Անբարենպաստ ընտանիքի երեխայի ես-ի դրսևորումների հոգեբանականյուրատիպությունը սոցիալականացման վաղ շրջանում // ք. Երևան 2002թ.
6. Խանամիրյան Ի. Ռ. ,Գևորգյան Դ.Է. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար» ,ԵՊՀ // ք.Երևան 2017թ.
7. Հարությունյան Ն. Ընտանիքի դերային համակարգը սոցիալական հոգեբանության համատեքստում // ք.Երևան 2008թ.
8. Սեդրակյան Ս.Ա. Ընտանիքի հոգեբանություն,«Ուրարտու համալսարան» //ք.Երևան 2010թ.